ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 202-Ա

«14» ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022Թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 68 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի, 34-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածի 31-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 2-րդ հավելվածի 2.9-րդ բաժինը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 166-Ն որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների (այսուհետ՝ կանոնադրություններ)՝

1) 4-րդ կետում դպրոցի գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն, յուրաքանչյուր դպրոցն իր մասով, խմբագրել ըստ ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ ՀՕ-328-Ն օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի՝ համաձայն հավելվածի,

2) 41-րդ կետում «առնվազն վեց անդամ» բառերը փոխարինել «առնվազն երկու երրորդը» բառերով,

3) 42-րդ կետում «փակ» բառը փոխարինել «բաց» բառով,

4) 43-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 43.1-ին կետով.

«43.1. Տնօրենի ընտրության ժամանակ սույն կանոնադրության 80-րդ կետի 1.1-ին ենթակետում և 102-րդ կետի 1.1-ին ենթակետում նշված քվեարկության արդյունքները պարտադիր են մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից առաջադրված դպրոցի խորհրդի անդամների համար: Ծնողական և մանկավարժական խորհուրդների՝ կառավարման խորհրդում առաջադրած անդամները, խորհուրդների կողմից քվեարկության արդյունքում ձայների հավասարությամբ պայմանավորված՝ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար տվյալ մրցույթի ժամանակ թեկնածու չառաջադրելու դեպքում, ազատ են իրենց քվեարկության ժամանակ:»,

5) 79-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը.»,

6) 80-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) քվեարկության միջոցով, դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդին հավանություն տալու,»,

7) 102-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) քննարկում է դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը և քվեարկությամբ որոշում դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի իր թեկնածուին.»:

2. Հաստատել կանոնադրությունների փոփոխությունները և լրացումները:

3. Սույն փոփոխությունները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ հաստատված և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների անբաժանելի մասերը:

4. Հանձնարարել հավելվածում նշված պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ղեկավարներին՝ օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն կատարված փոփոխությունների (կանոնադրությունների փոփոխությունների) պետական գրանցման համար:

10/14/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2022թ. հոկտեմբերի 14 -ի
թիվ 202-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌևՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 4-ՐԴ ԿԵՏՈՒՄ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ ՀՕ-328-Ն ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 8-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Դպրոցի անվանումը | Նախատեսվող փոփոխություններ՝ ըստ վարչատարածքային նոր բաժանման |
|---|---|---|
| 1 | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐԻ ՅՈՒՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Ագարակաձոր գյուղ, փողոց 1, շենք 17 |
| 2 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԵԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Ազատեկ գյուղ, 14-րդ փողոց, շենք 11 |
| 3 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐԻ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Աղավնաձոր գյուղ 3-րդ փողոց, շենք 33 |
| 4 | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՂՆՋԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Աղնջաձոր գյուղ, 2-րդ փողոց, շենք 26 |
| 5 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Արենի գյուղ, 3-րդ փողոց, շենք 40 |

| | | |
|---|---|---|
| | ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | |
| 6 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Արին գյուղ, 6-րդ փողոց, շենք 8 |
| 7 | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձոր մարզ, Եղեգիս համայնք, Արտաբույնք գյուղ, Կենտրոնական-7 |
| 8 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձոր մարզ, Վայք համայնք, Արտավան գյուղ, 1-ին փողոց, շենք 5 |
| 9 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻԻ Վ.ԼԵՎՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Արփի գյուղ, 1-ին փողոց, շենք 21 |
| 10 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐՈՒՆՈՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Բարձրունի գյուղ, 1-ին փողոց, շենք 7 |
| 11 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Գետափ գյուղ, Եղեգնաձորյան խճուղի 1 |
| 12 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Գլաձոր գյուղ, 33-րդ փողոց, շենք 40 |
| 13 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՆԴԵՎԱԶԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք, Գնդեվազ գյուղ, 4-րդ փողոց, շենք 2 |
| 14 | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹԱՆԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Գողթանիկ գյուղ, 5-րդ փողոց, շենք 2/1 |
| 15 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՄՔԻ | ՀՀ Վայոց ձոր մարզ Վայք համայնք,Գոմք |

| | | |
|---|---|---|
| | ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | գյուղ, 1-ին փողոց, շենք 15 |
| 16 | ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ԵԼՓԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, արենի համայնք, Ելփին բնակավայր, 8-րդ փողոց, շենք 4 |
| 17 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Եղեգիս գյուղ, Կենտրոնական փողոց 2 |
| 18 | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր քաղաք, Վայքի 4 |
| 19 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր քաղաք, Նարեկացի 12 |
| 20 | ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ« ԶԱՌԻԹԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Զառիթափ գյուղ, 8-րդ փողոց, շենք 1 |
| 21 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԵԴԵԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Զեդեա գյուղ, 1-ին փողոց, 9-րդ շենք: |
| 22 | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԹԱՌԱԹՈՒՄԲԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ 9-րդ փողոց, շենք 1 |
| 23 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Խաչիկ գյուղ, 15-րդ փողոց, շենք 1 |
| 24 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽՆՁՈՐՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Խնձորուտ գյուղ, 2-րդ փողոց, շենք 9 |
| 25 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Կարմրաշեն գյուղ, 2-րդ փողոց, շենք 2 |
| 26 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԵՐՀԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Հերհեր, 20-րդ փողոց, շենք 4 |
| 27 | ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՀԵՐՄՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Հերմոն գյուղ, Սիրանեսի փողոց, շենք 7 |
| 28 | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀՈՐԲԱՏԵՂԻ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, |

| | | |
|---|---|---|
| | ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | Հորբատեղ գյուղ, Կենտրոնական փողոց, շենք 7 |
| 29 | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀՈՐՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 10-րդ փողոց, շենք 1 |
| 30 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱՅԻ ԹԻՎ1ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Մալիշկա գյուղ, 8-րդ փողոց, շենք 76 |
| 31 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱՅԻ ՄԻԽԱՅԻԼ ՎԱՍԻԼԵՎԻՉ ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Մալիշկա գյուղ, 37-րդ փողոց, շենք 19 |
| 32 | ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Մարտիրոս գյուղ, 4-րդ փողոց, շենք 29 |
| 33 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄՈԶՐՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Մոզրով գյուղ, Գնիշիկի 1-ին փողոց, շենք 2 |
| 34 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՏԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 2-րդ փողոց, շինություն 17 |
| 35 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՉԻՎԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Չիվա գյուղ, 5-րդ փողոց, շենք 9 |
| 36 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք, Ջերմուկ քաղաք, Շահումյան փողոց, շենք 7 |
| 37 | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԹԻՎ 3 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք, Կեչուտ գյուղ 8-րդ փողոց, շենք 1 |

| | | |
|---|---|---|
| 38 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՌԻՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Ռինդ գյուղ, 2-րդ փողոց, շենք 2 |
| | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍԱԼԼԻԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձոր մարզ, Եղեգիս համայնք, Սալլի գյուղ, 2-րդ փողոց, շենք 3 |
| | «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Սարավան գյուղ, 3-րդ փողոց, շենք 23 |
| 41 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ «ՍԵՐՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Սերս գյուղ, 8-րդ փողոց, շենք 4 |
| 42 | ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՎԱՅՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձոր մարզ, Վայք համայնք, Վայք քաղաք, Ալավերդյան 17 |
| 43 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Վարդահովիտ գյուղ, 7-րդ փողոց, շինություն 4 |
| 44 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԵՐՆԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Վերնաշեն գյուղ, Թանահատի 8-րդ փողոց, շենք 2 |
| 45 | «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԳԼԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ | ՀՀ Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, Քարագլուխ գյուղ, 7-րդ փողոց, շենք 3 |